

# Առանձին ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

## Ագրովիժն ՓԲԸ

31 դեկտեմբերի 2024թ.

# Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին առանձին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին առանձին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին առանձին հաշվետվություն	10
Առանձին ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

## Անկախ աուդիտորի եզրակացություն

**Grant Thornton CJSC**  
Yerevan Plaza Business Center  
9 Grigor Lusavorich Street  
Yerevan 0015  
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ  
Երևան Պլազա բիզնես  
կենտրոն  
ՀՀ, ք. Երևան 0015  
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

Ազրովիժն ՓԲԸ-ի բաժնետիրոջը

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Ազրովիժն փակ բաժնետիրական ընկերության («Ընկերություն») առանձին ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին առանձին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին առանձին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին առանձին հաշվետվությունը, ինչպես նաև առանձին ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից առանձին ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը առանձին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԿ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՄԿ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը առանձին ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարոխության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Առանձին ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատության վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

### Աուդիտորի պատասխանատվությունը առանձին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ առանձին ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմի են օգտագործողների՝ առանձին ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով առանձին ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն ղեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել առանձին ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք առանձին ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև առանձին ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

## Auditor's Responsibilities for the Audit of the Separate Financial Statements

Our objectives are to obtain reasonable assurance about whether the separate financial statements as a whole are free from material misstatement, whether due to fraud or error, and to issue an auditor's report that includes our opinion. Reasonable assurance is a high level of assurance, but is not a guarantee that an audit conducted in accordance with ISAs will always detect a material misstatement when it exists. Misstatements can arise from fraud or error and are considered material if, individually or in the aggregate, they could reasonably be expected to influence the economic decisions of users taken on the basis of these separate financial statements.


As part of an audit in accordance with ISAs, we exercise professional judgment and maintain professional skepticism throughout the audit. We also:

- Identify and assess the risks of material misstatement of the separate financial statements, whether due to fraud or error, design and perform audit procedures responsive to those risks, and obtain audit evidence that is sufficient and appropriate to provide a basis for our opinion. The risk of not detecting a material misstatement resulting from fraud is higher than for one resulting from error, as fraud may involve collusion, forgery, intentional omissions, misrepresentations, or the override of internal control.
- Obtain an understanding of internal control relevant to the audit in order to design audit procedures that are Company's internal control.
- Evaluate the appropriateness of accounting policies used and the reasonableness of accounting estimates and related disclosures made by management.
- Conclude on the appropriateness of management's use of the going concern basis of accounting and, based on the audit evidence obtained, whether a material uncertainty exists related to events or conditions that may cast significant doubt on the Company's ability to continue as a going concern. If we conclude that a material uncertainty exists, we are required to draw attention in our auditor's report to the related disclosures in the separate financial statements or, if such disclosures are inadequate, to modify our opinion. Our conclusions are based on the audit evidence obtained up to the date of our auditor's report. However, future events or conditions may cause the Company to cease to continue as a going concern.
- Evaluate the overall presentation, structure and content of the separate financial statements, including the disclosures, and whether the separate financial statements represent the underlying transactions and events in a manner that achieves fair presentation.

We communicate with those charged with governance regarding, among other matters, the planned scope and timing of the audit and significant audit findings, including any significant deficiencies in internal control that we identify during our audit.

Armen Hovhannisyan  
Chief Executive Officer of  
"Grant Thornton" CJSC

29 August 2025



Emil Vassilyan, FCCA  
Engagement Partner, FCCA

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին առանձին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Հասույթ		28,297	25,023
Վաճառքի ինքնարժեք		(5,450)	(2,698)
<b>Համախառն շահույթ</b>		<b>22,847</b>	<b>22,325</b>
Այլ եկամուտ		957	-
Դրամաշնորհից եկամուտ		2,289	2,289
Իրացման ծախսեր		(1,225)	(1,314)
Վարչական ծախսեր	5	(78,993)	(75,709)
<b>Գործառնական գործունեությունից վնաս</b>		<b>(54,125)</b>	<b>(52,409)</b>
Շահաբաժիններից եկամուտ	6	310,000	93,740
Ֆինանսական եկամուտ	7	51,586	18,590
Այլ ֆինանսական արդյունքներ, զուտ		(1,487)	(4,312)
<b>Շահույթ մինչև հարկերը</b>		<b>305,974</b>	<b>55,609</b>
Շահութահարկի գծով փոխհատուցում	8	38,183	-
<b>Տարվա շահույթ</b>		<b>344,157</b>	<b>55,609</b>
<b>Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո</b>		<b>-</b>	<b>-</b>
<b>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>344,157</b>	<b>55,609</b>

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին առանձին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս առանձին ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
<b>Ակտիվներ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ		49,122	49,476
Ներդրումային գույք		52,125	56,347
Ներդրում դուստր կազմակերպություններում	9	1,045,100	889,500
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	89,601	145,398
Կապակցված կողմերին տրամադրված փոխառություններ		122,656	83,671
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>1,358,604</b>	<b>1,224,392</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ		-	81
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	30,131	61,950
Կապակցված կողմերին տրամադրված փոխառություններ		23,439	11,156
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	211,435	60,587
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>265,005</b>	<b>133,774</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>1,623,609</b>	<b>1,358,166</b>

# Ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Սանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
<b>Կապիտալ և պահուստներ</b>	13		
Բաժնետիրական կապիտալ		270,000	270,000
Այլ տարրեր		495,690	495,690
Կուտակված շահույթ		744,640	440,483
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>1,510,330</b>	<b>1,206,173</b>
<b>Պարտավորություններ</b>			
<b>Ոչ ընթացիկ</b>			
Ակտիվներին վերաբերող շնորհներ		33,767	36,056
Հետաձգված հարկային պարտավորություն	11	70,627	108,810
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>104,394</b>	<b>144,866</b>
<b>Ընթացիկ</b>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	8,885	7,127
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>8,885</b>	<b>7,127</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>1,623,609</b>	<b>1,358,166</b>

Առանձին ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 29 օգոստոսի 2025թ-ին:

Նվարդ Անանյան  
Տնօրեն



Նարինե Նուրոյան  
«Բի-Դի-Օ Ըբաունթինգ, Թաքս ընդ Լիզալ»  
ՓԲԸ-ի  
Հարկային և հարակից ծառայությունների  
տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս առանձին ֆինանսական հաշվետվությունների  
բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին առանձին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Այլ տարրեր	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	270,000	495,690	399,874	1,165,564
Տարվա շահույթ	-	-	55,609	55,609
<b>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>	-	-	55,609	55,609
Շահաբաժիններ	-	-	(15,000)	(15,000)
<b>2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>270,000</b>	<b>495,690</b>	<b>440,483</b>	<b>1,206,173</b>
Տարվա շահույթ	-	-	344,157	344,157
Շահաբաժիններ	-	-	(40,000)	(40,000)
<b>2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>270,000</b>	<b>495,690</b>	<b>744,640</b>	<b>1,510,330</b>

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին առանձին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս առանձին ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին առանձին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>			
Տարվա շահույթ		344,157	55,609
<i>Ճշգրտումներ՝</i>			
Շնորհներից եկամուտ		(2,289)	(2,289)
Մաշվածության ծախս		5,191	6,057
Շահաբաժիններից եկամուտ		(310,000)	-
Ֆինանսական եկամուտ		(51,586)	(18,590)
Շահութահարկի գծով ծախս		(38,183)	-
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի շարժ		-	(1,075)
Փոխարժեքային տարբերությունից վնաս		1,487	4,312
<b>Գործառնական շահույթ (վնաս) նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</b>		<b>(51,223)</b>	<b>44,024</b>
<hr/>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		138,207	(29,519)
Պաշարների փոփոխություն		81	(67)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն		1,758	821
<b>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</b>		<b>88,823</b>	<b>15,259</b>

# Դրամական միջոցների հոսքերի մասին առանձին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>			
Տրամադրված փոխառություններ		(65,978)	(34,777)
Տրամադրված փոխառությունների մարում		14,000	-
Ստացված տոկոսային եկամուտ		49,989	-
Ներդրում դուստր կազմակերպությունում		(155,600)	(20,000)
Հիմնական միջոցների ձեռքբերում		(615)	(1,010)
Ստացված շահաբաժին		256,226	73,740
<b>Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</b>		<b>98,022</b>	<b>17,953</b>
<b>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>			
Շահաբաժնի վճարում		(36,000)	(15,000)
<b>Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(36,000)</b>	<b>(15,000)</b>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		150,845	18,212
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		2	(4,236)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում		60,588	46,611
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում</b>		<b>211,435</b>	<b>60,587</b>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս [համախմբված] ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Առանձին ֆինանսական  
հաշվետվություններին կից  
ծանոթագրություններ  
Ազրովիժն ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված  
հազար հայկական (<<) դրամով)

## 1 Գործառնությունների բնույթը

Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 2006թ. փետրվարի 6-ին: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական մայր ընկերությունը «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամն էր («Քարդ Հիմնադրամ»):

2024 թվականի տվյալներով Ընկերության եկամտի հիմնական աղբյուրներ են հանդիսացել վարձակալական եկամուտը և գյուղատնտեսության ոլորտին առընչվող դասընթացների կազմակերպումը:

Ընկերությունը գրանցված է 1/21, 40 Ազատության պողոտա, ք. Երևան 0037, Հայաստանի Հանրապետություն հասցեով:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 5 մարդ (2023թ.՝ 5 մարդ):

## 2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՄ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՖՀՄՄ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (<<ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

### Դուստր ընկերություններ

Ընկերությունն ունի հետևյալ դուստր ընկերությունները.

31 դեկտեմբերի 2024թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Կանոնադրական կապիտալ	Գործունեության ոլորտ
ԱգրոՏրենդ ՓԲԸ	100%	Հայաստան	10.01.2019	60,000	Գյուղատնտեսական սարքավորումների վաճառք
Սմարթ Ագրո ՓԲԸ	100%	Հայաստան	10.01.2019	105,000	Անասնակերի ներմուծում և վաճառք
Կուլտիվա ՓԲԸ	100%	Հայաստան	01.06.2020	50,000	Գյուղատնտեսական սարքավորումների վաճառք
ԱգրիԿոնցեպտ ՓԲԸ	100%	Հայաստան	01.11.2019	70,000	Սննդի ներկրում և վաճառք
ՔԱՐԴ Ագրոկրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ	100%	Հայաստան	27.06.2008	604,500	Գյուղատնտեսական վարկերի տրամադրում

Ընկերությունը համախմբված հաշվետվություններ չի ներկայացնում, քանի որ վերջինիս ֆինանսական հաշվետվությունները համախմբվում են վերջնական մայր ընկերության՝ «Ագրոբիզնես և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

## Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժույթային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

## 3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

### 3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԿ) և ՀՄՍԿ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա.

- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (<<ՄՍ 1 փոփոխություններ),
- «Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում» (<<ՄՍ 16 փոփոխություններ),
- «Մարտահրավերները շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ» (<<ՄՍ 7 և <<ՄՍ 7 փոփոխություններ),
- «Կոմիտեանյան ոչ ընթացիկ պարտավորություններ» (<<ՄՍ 1 փոփոխություններ):

### 3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԿ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա  
Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Փոխանակելիության բացակայություն» (<<ՄՍ 21 փոփոխություն)
- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (<<ՄՍ 9 և <<ՄՍ 7 փոփոխություններ)
- <<ՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»
- <<ՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության բացահայտումներ»

## 4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 3-ում, Ընկերությունը վերանայել է հաշվապահական հաշվառման քաղաքականությունների իր բացահայտումը՝ համաձայն Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ <<ՄՍ 1 և <<ՄՍ 9-ործնական ցուցումներ 2 ստանդարտների փոփոխությունների: Բացահայտումները հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ ավելի պարզեցվել են և հստակեցվել՝ բացառելով ոչ էական հարցերի վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունները, ինչպես նաև ընդհանուր բնույթի տեղեկատվությունը, որը միայն կրկնօրինակում է <<ՄՍ-ների պահանջները:

### 4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

### 4.2 Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

### 4.3 Բիզնեսի միավորումներ

Բոլոր ներդրումները հաշվառված են սկզբնական արժեքով: «ՔԱՐԴ Ագրոկրեդիտ» ՈւՎԿ-ի նվիրատվությամբ ստացումը Ընկերության կողմից հաշվառվել է սկզբնական արժեքով՝ որի արդյունքում գույքի կամ ցածր արժեքով փոխանցումից եկամուտ չի առաջանում: Այս մեթոդի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկու ընկերություններն էլ հանդիսանում են միևնույն խմբի

անդամ և չունեն չվերահսկվող բաժնեմաս և գործարքի արդյունքում վերջնական վերահսկող կազմակերպության փոփոխություն տեղի չի ունեցել:

#### 4.4 Արտարժույթ

##### Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

##### Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	413.89	447.90

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

#### 4.5 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում ծառայությունների մատուցումից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5- քայլի գործընթացով.

- Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
- Բացահայտել կատարման պարտականությունները
- Որոշել գործարքի գինը
- Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Վարձակալությունից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը: Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է, երբ փաստացի մատուցված ծառայություններն ընդունվում են պատվիրատուի կողմից:

#### 4.6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 20 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5-8 տարի
Տնտեսական գույք	- 5-8 տարի
Այլ	- 5 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

#### 4.7 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու և/կամ դրա արժեքի աճի նպատակով, սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով՝ ներառելով գործարքի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով:

Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն առաջացել է:

Ներդրումային գույքից ստացված վարձակալական եկամուտը և գործառնական ծախսերը ներառված են համապատասխանաբար հասույթում և այլ ծախսերում:

#### 4.8 Ֆինանսական գործիքներ

##### Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապահովված են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

### Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՄ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեքի մասնաճյուղի, որն արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 10-ում:

### Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

#### Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

#### Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՄ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՄ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՄ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասի միջոցով:

Պարտքային կորուստների ճանաչումն այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է ավելի ընդլայնված տեղեկատվություն ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Ապագայամետ գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ն ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

### Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվներն՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ընկերությունը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է Ծանոթագրություն 17.2-ում:

### Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 10.1-ում:

### Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

## 4.9 Ծնորհներ

Ծնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Ընդհանրապես, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

#### 4.10 Շահութահարկ

##### Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

##### Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

#### 4.11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

#### 4.12 Սեփական կապիտալ, պահուստներ և շահաբաժինների վճարումներ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը: Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը: Սեփականատերերի հետ բոլոր գործարքներն առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Կապիտալի այլ տարրն իրենից ներկայացնում է մայր ընկերությունից անհատույց ստացված դուստր ընկերությունում ներդրումը՝ հանած գործարքին առընչվող հետաձգված հարկերը:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

#### 4.13 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

#### Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

#### Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

#### 4.14 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՄ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

### Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել (տե՛ս Ծանոթագրություն 18):

### Մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները

Ղեկավարությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ վերանայում է մաշվող ակտիվների օգտակար ծառայության ժամկետների և մնացորդային արժեքների գնահատումները՝ հիմնվելով ակտիվների ակնկալվող օգտակարությունից: Այս գնահատումներում անորոշությունները կապված են տեխնոլոգիական հնության հետ, որը կարող է փոխել որոշակի ծրագրային ապահովման և SS սարքավորումների օգտակարությունը, ինչպես նաև բնապահպանական կանոնակարգերը, որոնք կարող են հանգեցնել աղտոտող ակտիվների ավելի արագ մաշվածությանը:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության վերանայումը իրականացվել է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվի դրությամբ հայտնի կլիմայական փոփոխությունը և շրջակա միջավայրի կանոնակարգերը, որոնք Ընկերության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի վրա չեն հայտնաբերել որևէ էական ազդեցություն:

Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

### 4.22.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

#### Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

## 5 Վարչական ծախսեր

	2024թ.	2023թ.
Հատկացումներ աշխատակիցներին	57,326	62,058
Հիմնական միջոցների և ներդրումային գույքի մաշվածության ծախս	3,430	3,829
Բանկային և ապահովագրման ծախսեր	528	658
Աուդիտի և խորհրդատվական ծախսեր	4,963	3,905
Գործուղման և ներկայացուցչական ծախս	7,757	339
Այլ	4,989	4,920
	<b>78,993</b>	<b>75,709</b>

## 6 Շահաբաժիններից եկամուտ

2024թ.-ի ընթացքում հայտարարվել են հետևյալ շահաբաժինները՝ Քարդ ԱզրոԿրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ՝ 297,500 հազար դրամ, որը վճարվել է, (2023թ.-ին՝ 60,500 հազար դրամ), ԱգրիԿոնցեպտ ՓԲԸ՝ 12,500 հազար դրամ (2023թ.-ին՝ 33,240 հազար դրամ): Ծանոթագրություն 19-ում բացահայտված է հաշվետու ժամանակաշրջանից հետո հայտարարված և վճարված շահաբաժինների վերաբերյալ տեղեկատվությունը:

## 7 Ֆինանսական եկամուտ

	2024թ.	2023թ.
Կարճաժամկետ բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	1,854	-
Ֆինանսական պարտավորությունների ներկա արժեքով ներկայացնելուց եկամուտ	21,262	-
Ֆինանսական պարտավորությունների զեղչման հակադարձումից եկամուտ	15,126	12,520
Կապակցված կողմերին տրամադրված վարկերից տոկոսային եկամուտ	13,344	6,070
<b>Ընդամենը ֆինանսական եկամուտ</b>	<b>51,586</b>	<b>18,590</b>

## 8 Շահութահարկի գծով փոխհատուցում

	2024թ.	2023թ.
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 11)	38,183	-
<b>Ընդամենը շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)</b>	<b>38,183</b>	<b>-</b>

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
<b>Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)</b>	305,974		55,609	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	55,075	18%	10,010	18%

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
(Չհարկվող եկամուտ) չնվազեցվող ծախսեր, զուտ	(86,629)	(28%)	(1,693)	(3%)
Չօգտագործված հարկային վնասներից ճանաչված հետաձգված հարկային ակտիվի ազդեցությունը	(6,629)	(2%)	(8,317)	(15%)
<b>Շահութահարկի գծով փոխհատուցում</b>	<b>(38,183)</b>	<b>(12%)</b>	-	-

## 9 Ներդրում դուստր կազմակերպություններում

2024թ.-ին Ընկերությունը ներդրում է կատարել Կուլտիվա ՓԲԸ-ում՝ 120,000 հազար ՀՀ դրամ, ԱգրոՏրենդ ՓԲԸ-ում՝ 20,000 ՀՀ դրամ, Քարդ ԱգրոԿրեդիտ ՈւՎԿ-ում՝ 15,600 հազար ՀՀ դրամ: 2023թ.-ին Ընկերությունը ներդրում է կատարել ԱգրիԿոնցեպտ ՓԲԸ-ում՝ 20,000 հազար ՀՀ դրամ:

Ընկերությունը չի համախմբել դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները, քանի որ դրանք համախմբվել են վերջնական վերահսկող հանդիսացող «Ագրոքիզնես և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Դուստր ընկերությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 2-ում:

## 10 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

### 10.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4,8-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

#### Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
<b>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</b>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	118,747	205,955
Տրամադրված փոխառություններ	146,095	94,827
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	211,435	60,587
<b>Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</b>	<b>476,277</b>	<b>361,369</b>

#### Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
<b>Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ</b>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,752	4,931

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
<b>Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</b>	<b>5,752</b>	<b>4,931</b>

## 10.2 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2024թ.	2023թ.
<b>Ֆինանսական ակտիվներ</b>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	126,737	224,411
Պարտքային կորուստների համար պահուստ	(20,490)	(27,182)
Այլ	12,500	8,726
	<b>118,747</b>	<b>205,955</b>

### Ոչ ֆինանսական ակտիվներ

Տրված կանխավճարներ	43	1,393
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	942	-
<b>Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ</b>	<b>985</b>	<b>1,393</b>
	<b>119,732</b>	<b>207,348</b>

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքները հետևյալն են.

	Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք	
	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր կապակցված կողմերից	155,379	289,544	97,932	174,964
Այլ դեբիտորական պարտքեր	20,815	30,991	20,815	30,991
	<b>176,194</b>	<b>320,535</b>	<b>118,747</b>	<b>205,955</b>

Կապակցված կողմերից երկարաժամկետ դեբիտորական պարտքը անտոկոս է և ներկայացված է իրական արժեքով՝ զեղչելով առնչվող դրամական միջոցների հոսքերը 12 տարվա ընթացքում՝ կիրառելով ԿԲ-ի տոկոսադրույքները՝ համանման ֆինանսական գործիքների ժամանակաշրջանի համար:

Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Ընկերության՝ համեմատական ժամանակաշրջանի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի համար կորուստի գծով պահուստի մնացորդը համադրվում է տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

	2024թ.	2023թ.
Կորուստների գծով պահուստը, տարեսկզբի մնացորդ	27,182	30,402
Տարվա ընթացքում չօգտագործված պահուստի հակադարձում	(6,692)	(1,075)

	2024թ.	2023թ.
Տարվա ընթացքում դեբիտորական պարտքերի դուրսգրում	-	(2,145)
<b>Կորուստների գծով պահուստը, տարեվերջի մնացորդ</b>	<b>20,490</b>	<b>27,182</b>

Ծանոթագրություն 17.2-ում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները: Արժեզրկման պահուստի ընթացիկ և համադրելի գումարները հաշվարկելիս կիրառվել է ՖՀՄՍ 9-ի՝ ակնկալվող կորուստների մոդելը:

## 11 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	(108,810)	(108,810)
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տե՛ս Ծանոթագրություն 8)	38,183	-
<b>Տարեվերջի մնացորդ</b>	<b>(70,627)</b>	<b>(108,810)</b>

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
<b>Հետաձգված հարկային ակտիվներ</b>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	20,624	(6,424)	14,200
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	719	(315)	404
Կուտակված հարկային վնաս	16,950	6,629	23,579
	<b>38,293</b>	<b>(110)</b>	<b>38,183</b>
Հետաձգված հարկային ակտիվի գնահատում	(38,293)	38,293	-
<b>Հետաձգված հարկային պարտավորություններ</b>			
Ստացված նվիրատվություն	108,810	-	108,810
<b>Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ)</b>	<b>(108,810)</b>	<b>38,183</b>	<b>(70,627)</b>

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
<b>Հետաձգված հարկային ակտիվներ</b>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	19,472	1,152	20,624
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	556	163	719
Կուտակված հարկային վնաս	8,633	8,317	16,950
	<b>28,661</b>	<b>9,632</b>	<b>38,293</b>
Հետաձգված հարկային ակտիվի գնահատում	(28,661)	(9,632)	(38,293)

	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
<b>Հետաձգված հարկային պարտավորություններ</b>			
Ստացված նվիրատվություն	108,810	-	108,810
<b>Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ)</b>	<b>(108,810)</b>	-	<b>(108,810)</b>

## 12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները բանկերում և մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող կարճաժամկետ ներդրումները: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Բանկային հաշիվներ	69,581	60,587
Կարճաժամկետ ներդրումներ	141,854	-
<b>Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</b>	<b>211,435</b>	<b>60,587</b>

Տե՛ս Ծանոթագրություն 17.1՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների արժույթների բացահայտման համար:

## 13 Սեփական կապիտալ

### 13.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ

	Սովորական բաժնետոմսեր 2024թ.	Սովորական բաժնետոմսեր 2023թ.
Հայտարարված բաժնետոմսեր		
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 600,000 դրամ	450	450

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

2024թ. ընթացքում վճարվել է շահաբաժին՝ 40,000 հազար << դրամ (2023թ.՝ 15,000 << դրամ):

## 14 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,752	935
Հաճախորդներից կանխավճարներ	109	109
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	780	2,087

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Վճարվելիք հատուցումներ աշխատակիցներին	2,244	3,996
Վճարվելիք շահաբաժիններ	4,000	-
<b>Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր</b>	<b>8,885</b>	<b>7,127</b>

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

## 15 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, դուստր ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները և նման ընկերությունների հիմնական ղեկավար անձնակազմը:

### 15.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամի կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100% և հանդիսանում է վերջնական վերահսկող կողմ: Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամը գործունեություն է ծավալում Հայաստանի Հանրապետությունում, գտնվում է ք. Երևան, Ազատության փողոց 40, 1/21 հասցեում և հրապարակում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ: Ընկերության վերահսկող մարմին է հանդիսանում բաժնետերերի ժողովը:

### 15.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

#### Գործարքներ

	2024թ.	2023թ.
<b>Մայր ընկերություն</b>		
Ծառայությունների ձեռքբերում	-	977
Ծառայությունների մատուցում	6,465	4,337
Շահաբաժնի վճարում	40,000	15,000
<b>Դուստր ընկերություններ</b>		
Տրամադրված փոխառություններ	74,489	62,449
Ծառայությունների մատուցում	1,673	2,253
Ծառայությունների ձեռքբերում	140	114
Ստացված շահաբաժիններ	310,000	93,740
Փոխառությունների վերադարձ	6,000	10,000
Կապիտալի համալրում	155,600	20,000
Տոկոսային եկամուտ	23,675	18,590

Մնացորդներ

	2024թ.	2023թ.
<b>Մայր ընկերություն</b>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	668
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,000	521
<b>Դուստր ընկերություններ</b>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	160,585	289,404
Տրամադրված փոխառություններ	145,451	94,827
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	47

**15.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները մայր ընկերության բաժնետիրական կապիտալում մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «հատկացումներ աշխատակիցներին» հոդվածում.

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	42,343	35,777
<b>Ընդամենը</b>	<b>42,343</b>	<b>35,777</b>

**16 Պայմանականություններ**

**16.1 Ապահովագրություն**

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի որ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

**16.2 Հարկեր**

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

## 17 Ֆինանսական գործիքների ռիսկ

### Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

### 17.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի:

#### Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության՝ տրամադրած փոխառություններից, որոնք տրամադրվել են ԱՄՆ դոլարով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացույցված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

#### Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո
<b>Ֆինանսական ակտիվներ</b>		
Տրամադրված փոխառություններ	39,636	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	237	1
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>39,873</b>	<b>1</b>

#### Հոդված

31 դեկտեմբերի 2023թ.	ԱՄՆ դոլար	Եվրո
<b>Ֆինանսական ակտիվներ</b>		
Տրամադրված փոխառություններ	57,366	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	8
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>57,366</b>	<b>8</b>

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	3,987	5,737	1	1
	<b>3,987</b>	<b>5,737</b>	<b>1</b>	<b>1</b>

## 17.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը , կառավարվում է ավանդները բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Առևտրային դեբիտորական պարտքերը ներառում են դուստր ընկերության երկարաժամկետ դեբիտորական պարտքը: Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում: Բացի այդ Ընկերությունը գրավ չի պահանջում նաև տրամադրված փոխառությունների համար:

## Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2024թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. հունվարի 1-ին համապատասխանաբար նախորդող վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են): Հաշիվ-ապրանքագրի ամսաթվից հետո 360 օրվա ընթացքում վճարում չկատարելը և Ընկերության հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

Ելնելով վերը նկարագրվածից՝ առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

31 դեկտեմբերի 2024թ.

	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակա- հատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	-	16,645	-
1 տարուց ավելի	16.17%	110,092	20,491
	<b>16.17%</b>	<b>126,737</b>	<b>20,491</b>

31 դեկտեմբերի 2023թ.

	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակա- հատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 1 ամիս	0.03%	6,392	67
1 տարուց ավելի	11.32%	233,137	27,115
		<b>239,529</b>	<b>27,182</b>

## 18 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

### 18.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է

Առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում առաջացել են դուստր ընկերություններին ապրանքների վաճառքի արդյունքում: Դրանք ունեն մինչև 12 տարի մարման ժամկետ և անտոկոս են: Առևտրային դեբիտորական պարտքերի գնահատված իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Իրական արժեքի գնահատումը որոշվում է՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը: Իրական արժեքը գնահատվել է՝ զեղչելով պայմանագրով

Նախատեսված դրամական հոսքերը 10%-ով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է՝ 10%: Ընկերության այլ ֆինանսական գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

## 19 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2025թ.-ի հունվար ամսին Ընկերությունը Քարդ ԱգրոԿրեդիտ ՈւՎԿ ՓԲԸ-ում իր ունեցած 1,300 դրամ անվանական արժեքով 477,000 հատ հասարակ անվանական բաժնետոմսերից 12,000 հատը վաճառել է Ընկերության աշխատակիցներին: Բաժնետոմսերը վաճառվել են անվանական արժեքով: Վաճառքից հետո Ագրովիժն ՓԲԸ բաժնեմասը կազմել է 97,48%:

Հաշվետու ամսաթվից հետո, Քարդ ԱգրոԿրեդիտ ՈւՎԿ ՓԲԸ-ն 2024թ-ի զուտ շահույթից լրացուցիչ հայտարարվել և վճարվել է 80,000 հազար դրամ շահաբաժին: